ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ	ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ	ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ
Եկամտաբերություն	Պարտատոմսերը սովորաբար ապահովում են ավելի բարձր եկամտաբերություն:	Ներդրման համեմատելի ժամկետների դեպքում ավանդները սովորաբար ապահովում են ավելի ցածր եկամտաբերություն:
Ներդրման ժամկետի ճկունություն	Մինչև մարումը ցանկացած ժամանակ վաճառելու հնարավորություն՝ առանց վճարված տոկոսները կորցնելու:	Ավանդի ժամկետի ընթացքում պայմանագիրը լուծելու դեպքում տոկոսները կորցնելու հավանականություն:
Գումարի տնօրինման ճկունություն	Պարտատոմսերի մասնակի վաճառքի հնարավորություն:	Ավանդը մասնակի մարելու հնարավորություն սովորաբար չի տալիս: Եթե նույնիսկ այդպիսի հնարավորություն տրվում է, ապա նման ճկուն պայմաններով բանկային ավանդների նկատմամբ անհամեմատ ավելի ցածր տոկոսադրույք է սահմանվում:
Ֆիքսված եկամուտ	Պարտատոմսի գինը շուկայում կարող է ընկնել կամ բարձրանալ, սակայն անկախ ընթացիկ տատանումներից, պարտատոմսի սեփականատերը ժամկետի վերջում ստանում է ֆիքսված եկամուտ:	Ներդրված գումարի չափը չի ենթարկվում շուկայական տատանումների, եկամուտը նույնպես ֆիքսված է:

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ	ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ	ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴ
Նախընտրած ճյուղում և ընկերությունում ներդրման հնարավորություն	Ներդրողը հնարավորություն ունի իր ուղղակի ներդրումն ունենալ տնտեսության իր ընտրած կոնկրետ ոլորտում, կոնկրետ ընկերությունում:	Ներդրողը իր խնայողությունները/ ազատ միջոցները կենտրոնացնում է բանկում, որն իր հայեցողությամբ է իրականացնում այդ գումարների տեղաբաշխումը:
Երաշխավորվածություն	Կարող է երաշխավորված լինել ընկերության գույքով:	Երաշավորվում են ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից. դրամային ավանդների դեպքում՝ 10 մլն դրամի, դոլարային կամ դոլարային և դրամային ավանդներ դեպքում՝ 5 մլն դրամի չափով:
Եկամտի լրացուցիչ աղբյուրների ապահովում	Պարտատոմսերով հնարավոր է կնքել ռեպո համաձայնագրեր: Բացի տոկոսային եկամտից հնարավոր է ձևավորել նաև հավելյալ առևտրային եկամուտ:	Ավանդներով հնարավոր չէ կնքել ռեպո համաձայնագրեր:
Հարկում	Կորպորատիվ պարտատոմսերից ստացվող եկամուտը ֆիզ անձանց դեպքում հարկվում է 10%-ի չափով:	Բանկային ավանդներից ստացվող եկամուտը ֆիզ անձանց դեպքում հարկվում է 10%-ի չափով: